ՎԴ/1904/05/24

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15 ապրիլի 2024 թվական ք. Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեդևյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՎԴ/1904/05/24 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու վերաբերյալ Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2024 թվականի մարտի 20-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. «ՍԱՐԳԻՍ ԵՎ ՊԱՊ» ՍՊԸ-ն 2024 թվականի փետրվարի 22-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Վեդի համայնքի՝ 2023 թվականի օգոստոսի 4-ի՝ «Ազատ Վալոդի Գրիգորյանին տրամադրված վարձակալության իրավունքը ենթավարձակալության հանձնելու թույլտվության մասին» թիվ 1602-Ա որոշումը վերացնելու, և որպես հետևանք՝ Ազատ Վալոդի Գրիգորյանի և Մանվել Ռազմիկի Մարտիրոսյանի միջև 2023 թվականի օգոստոսի 25-ի՝ ենթավարձակալության պայմանագիրը, և դրա հիման վրա Մանվել Ռազմիկի

Մարտիրոսյանի անվամբ իրականացված ենթավարձակալության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 28-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրվել է Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

3. Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2024 թվականի մարտի 20-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի ապրիլի 1-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 154-րդ հոդվածի 2-րդ մասին, 182-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, ՀՀ հողային օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասին, 57-րդ հոդվածի 1-ին մասին, 76-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին կետին, 129-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերին, 463-րդ հոդվածի 3-րդ կետին, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասին, 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ ԵԱՔԴ/1369/02/09, 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ՎԴ/12145/05/13 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ ՀՀ վարչական դատարանը 2024 թվականի փետրվարի 28-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Տվյալ դեպքում «ՍԱՐԳԻՍ ԵՎ ՊԱՊ» ՍՊԸ-ն ներկայացված հայցադիմումով որպես հիմնական պահանջ խնդրել է վերացնել Վեդի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 4-ի՝ «Ազատ Վալոդի Գրիգորյանին տրամադրված*

վարձակալության իրավունքը ենթավարձակալության հանձնելու թույլտվության մասին» թիվ 1602-Ա որոշումը:

Դատարանն արձանագրում է, որ համաձայն Վեդի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 4-ի՝ «Ազատ Վալոդի Գրիգորյանին տրամադրված վարձակալության իրավունքը ենթավարձակալության հանձնելու թույլտվության մասին» թիվ 1602-Ա որոշման՝ Ազատ Գրիգորյանին թույլատրվել է՝ 2007 թվականի հոկտեմբերի 11-ին Եղեգնավան համայնքի և Ազատ Գրիգորյանի միջև կնքված անշարժ գույքի՝ «Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասերը վարձակալության հանձնելու մասին» պայմանագրով, Եղեգնավան բնակավայրի 03-041-0123-0001 կադաստրային ծածկագիրը կրող 47.67 հա մակերեսով հողատարածքի նկատմամբ իր իրավունքներն ու պարտավորությունները՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և նշված պայմանագրով սահմանված պայմաններով ու ժամկետով ենթավարձակալության իրավունքով տրամադրել Մանվել Ռազմիկի Մարտիրոսյանին:

Դատարանը փաստում է, որ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության իրավունքի տնօրինման փաստով ծագում են քաղաքացիաիրավական հարաբերություններ, որոնց համայնքը, մասնակցում է քաղաքացիական շրջանառության մյուս մասնակիցների հետ հավասար հիմունքներով: Նշված իրավազորության իրականացումը կապված չէ վերջինիս հանրային-իշխանական (գործադիր-կարգադրիչ) գործառույթների իրականացման հետ:

Վերոգրյալից հետևում է, որ թեև Վեդի համայնքի ղեկավարի՝ 2023 թվականի օգոստոսի 4-ի՝ «Ազատ Վալոդի Գրիգորյանին տրամադրված վարձակալության իրավունքը ենթավարձակալության հանձնելու թույլտվության մասին» թիվ 1602-Ա որոշման հիման վրա ծագած իրավահարաբերությանը մասնակցում է հանրային իշխանության սուբյեկտ հանդիսացող տեղական ինքնակառավարման մարմինը, այդուհանդերձ, այդ հարաբերություններում վերջինս չունի օրենքով սահմանված իշխանական լիազորություններ իրականացնելու պարտականություն, այլ իրացնում է համայնքի՝ որպես քաղաքացիական շրջանառության մասնակցի՝ քաղաքացիաիրավական բնույթի իրավունքներն ու պարտականությունները:

Դատարանը գտնում է, որ սույն դեպքում հայցվորի կողմից ներկայացված պահանջը բխում է մասնավոր՝ քաղաքացիաիրավական հարաբերություններից, ուստի հանրային բնույթ չունենալու պայմաններում պահանջն ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին, որպիսի պայմաններում հայցադիմումը պետք է վերահասցեագրվի ըստ ընդդատության՝ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության 21-րդ հոդվածի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի առաջին ատյանի դատարան (պատասխանողի գտնվելու վայրն է Արարատի մարզ, ք. Վեդի, Թումանյան 6)»[1]:

6. Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածին, 20-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 121-րդ հոդվածի 2-րդ մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 11-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերին, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասին, 21-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի հունիսի 25-ի թիվ ՎԴ/0476/05/08, 2011 թվականի հուլիսի 27-ի թիվ ԵԱՔԴ/0433/02/11, 2022 թվականի ապրիլի 29-ի թիվ ՎԴ/6418/05/21, 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0823/05/14, թիվ ՎԴ/0830/05/14 և թիվ ՎԴ/1621/05/14 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի մարտի 20-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և այդ առնչությամբ դիմել է ՀՀ Վճռաբեկ դատարան՝ նշելով հետևյալը. *«(...) Առաջին հայացքից ներկայացված պահանջից կարող է թվալ, որ առկա է մասնավոր իրավահարաբերություն, սակայն Դատարանի կարծիքով անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ որպես ներկայացված պահանջի հիմք հայցվորը նշել է այն, որ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից հայցվորին 2015*

[1] Տե՛ս դատական գործը, թերթեր 30-33:

թվականի հունիսի 1-ին տրամադրվել է օգտակար հանածոյի արդյունահանման թիվ ՇԱԹ-29/521 թույլտվությունը, թիվ Լ-521 լեռնահատկացման ակտը և սահմանված կարգով կնքվել է թիվ Պ-521 ընդերքօգտագործման պայմանագիրը: Նշված հանքավայրը գտնվում է թիվ 03-041-0123-0001 կադաստրային ծածկագրով հողամասում, որն իր հերթին գտնվում է հատուկ նշանակության հողերում՝ Արաքս գետի ափին:

Հետևաբար, հաշվի առնելով վերոգրյալը Դատարանի գնահատմամբ

- *պատասխանողը հանդիսանում է հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ,*
- *դատարանը պետք է գնահատի, թե արդյոք լեռնահատկացման ակտի և ընդերքօգտագործման պայմանագրի առկայության պարագայում /որը տրամադրել է պետական մարմին/ համայնքն իրավասություն ուներ հանքարդյունահանման տարածքը տրամադրել օգտագործման այլ անձի, թե ոչ,*
- *պետության կողմից տրամադրված ընդերքօգտագործման իրավունքն ուղղված է հանրային շահի իրացմանը»*[2]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը</u>.

7. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/1904/05/24 գործն ըստ հայցի՝ «ՍԱՐԳԻՍ ԵՎ ՊԱՊ» ՍՊԸ-ի ընդդեմ Վեդի համայնքի՝ 2023 թվականի օգոստոսի 4-ի՝ «Ազատ Վալոդի Գրիգորյանին տրամադրված վարձակալության իրավունքը ենթավարձակալության հանձնելու թույլտվության մասին» թիվ 1602-Ա որոշումը վերացնելու, և որպես հետևանք՝ Ազատ Վալոդի Գրիգորյանի և Մանվել Ռազմիկի Մարտիրոսյանի միջև 2023 թվականի օգոստոսի 25-ի՝ ենթավարձակալության պայմանագիրը, և դրա հիման վրա Մանվել Ռազմիկի Մարտիրոսյանի անվամբ իրականացված ենթավարձակալության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ենթակա չէ*

[2] Տե՛ս դատական գործը, թերթեր 39-42:

Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝*

1) վարչական դատարանը. (...)»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:*

(...)

6. *Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների*

նախագահները գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (…)»:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝*«(…) Քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերությունների մասնակիցները՝ ֆիզիկական անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա պետությունների քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք (այսուհետ՝ քաղաքացիներ)*

ու իրավաբանական անձինք են, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունը և համայնքներն են (...)»:

Նույն օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետությունը և համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով»:*

Նույն օրենսգրքի 620-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարձակալն իրավունք ունի վարձակալած գույքը հանձնել ենթավարձակալության, վարձակալության պայմանագրով իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցել այլ անձի, վարձակալած գույքը հանձնել անհատույց օգտագործման, վարձակալության իրավունքը գրավ դնել կամ որպես ավանդ ներդնել տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում միայն վարձատուի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով, այլ օրենքներով կամ այլ իրավական ակտերով: Նշված դեպքերում, բացառությամբ ենթավարձակալության, վարձատուի առջև պայմանագրով պատասխանատվություն է կրում վարձակալը»:*

9. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին ՀՀ Վճռաբեկ դատարանը մանրամասն անդրադարձ է կատարել *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության, երրորդ անձ <<ՄաքԴոնալդս Քորփորեյշն>> ընկերություն* վարչական գործով կայացված որոշման շրջանակներում՝ արձանագրելով հետևյալը. *«(...) [Հ]անրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարբերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձիք, այդ*

թվում՝ պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: (…) [Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (…)»[3]:

10. Սույն որոշման 8-9-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից և մեջբերված իրավական դիրքորոշումներից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Բացի այդ, իրավահարաբերությունը որպես հանրային որակելու համար անհրաժեշտ է, առաջին հերթին, բացահայտել իրավահարաբերության տարրերը՝ օբյեկտը, սուբյեկտը և բովանդակությունը: Ուստի, միայն իրավահարաբերության կողմերից մեկի՝ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ լինելու հանգամանքը դեռևս բավարար չէ՝ տվյալ իրավահարաբերությունը

---

[3] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության, երրորդ անձ <<ՄաքԴոնալդս Քորփորեյշն>> ընկերություն*՝ վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

հանրային որակելու համար, քանի որ պետությունը կամ համայնքը՝ ի դեմս իրավասու վարչական մարմնի, կարող են ներգրավվել նաև մասնավոր հարաբերություններում: Վերջիններս ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով կարող են մասնակցել քաղաքացիական իրավահարաբերություններին, իրենց իրավասության սահմաններում ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ ու պարտականություններ, այդ թվում նաև՝ կնքել քաղաքացիաիրավական պայմանագրեր:

11. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- «ՍԱՐԳԻՍ ԵՎ ՊԱՊ» ՍՊԸ-ն 2024 թվականի փետրվարի 22-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Վեդի համայնքի՝ 2023 թվականի օգոստոսի 4-ի՝ «Ազատ Վալոդի Գրիգորյանին տրամադրված վարձակալության իրավունքը ենթավարձակալության հանձնելու թույլտվության մասին» թիվ 1602-Ա որոշումը վերացնելու, և որպես հետևանք՝ Ազատ Վալոդի Գրիգորյանի և Մանվել Ռազմիկի Մարտիրոսյանի միջև 2023 թվականի օգոստոսի 25-ի՝ ենթավարձակալության պայմանագիրը, և դրա հիման վրա Մանվել Ռազմիկի Մարտիրոսյանի անվամբ իրականացված ենթավարձակալության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին[4],

- հայցադիմումը ՀՀ վարչական դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 28-ի որոշմամբ վերահասցեագրվել է Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության իրավունքի տնօրինման փաստով ծագում են քաղաքացիաիրավական հարաբերություններ, որոնց համայնքը մասնակցում է քաղաքացիական շրջանառության մյուս մասնակիցների հետ հավասար հիմունքներով: Նշված իրավազորության իրականացումը կապված չէ վերջինիս հանրային-իշխանական (գործադիր-կարգադրիչ) գործառույթների իրականացման հետ[5],

- Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի մարտի 20-ի որոշմամբ գտել է, որ սույն

[4] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[5] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

գործը ենթակա չէ Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և այդ առնչությամբ դիմել է ՀՀ Վճռաբեկ դատարան՝ նշելով, որ պատասխանողը հանդիսանում է հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ, դատարանը պետք է գնահատի, թե արդյոք լեռնահատկացման ակտի և ընդերքօգտագործման պայմանագրի առկայության պարագայում (որը տրամադրել է պետական մարմին) համայնքն իրավասություն ուներ հանքարդյունահանման տարածքը տրամադրել օգտագործման այլ անձի, թե ոչ, պետության կողմից տրամադրված ընդերքօգտագործման իրավունքն ուղղված է հանրային շահի իրացմանը[6]:

12. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-10-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նկատել, որ սույն գործով ներկայացված հիմնական պահանջով հայցվորը խնդրել է անվավեր ճանաչել Վեդի համայնքի ղեկավարի՝ 2023 թվականի օգոստոսի 4-ի «Ազատ Վալոդի Գրիգորյանին տրամադրված վարձակալության իրավունքը ենթավարձակալության հանձնելու թույլտվության մասին» թիվ 1602-Ա որոշումը, որով Վեդի համայնքի ղեկավարը որոշել է թույլատրել Ազատ Գրիգորյանին 2007 թվականի հոկտեմբերի 11-ին վերջինի և Եղեգնավան համայնքի միջև կնքված անշարժ գույքի՝ «Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողամասերը վարձակալության հանձնելու մասին» պայմանագրով, Եղեգնավան բնակավայրի 03-041-0123-0001 կադաստրային ծածկագիրը կրող, 47.67 հա մակերեսով հողատարածքի նկատմամբ իր իրավունքներն ու պարտավորությունները՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և նշված պայմանագրով սահմանված պայմաններով ու ժամկետներով ենթավարձակալության իրավունքով տրամադրել Մանվել Ռազմիկի Մարտիրոսյանին:

Այսինքն՝ վեճի առարկա որոշմամբ, համայնքի ղեկավարը՝ որպես վարձատու, իրացնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 620-րդ հոդվածով վերապահված իր իրավունքը, համաձայնություն է տվել համայնքային հողը ենթավարձակալության իրավունքով հանձնելու այլ անձի, որպիսի իրավասությունը բխում է ոչ թե հանրային

---

[6] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

իրավունքի նորմերից, այլ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վարձակալական իրավահարաբերությունները կարգավորող նորմերից:

Ստացվում է, որ վիճարկվող որոշումը կայացնելու կապակցությամբ ծագող իրավահարաբերություններում վարչական մարմինը՝ տվյալ դեպքում Վեդի համայնքի ղեկավարը, մասնակցել է որպես մասնավոր, քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտ: Տվյալ հարաբերություններում վարչական մարմինը չի իրացրել իր հանրային իշխանական լիազորությունները, այլ ներգրավվել է դրանցում որպես պայմանագրի կողմ՝ իրացնելով պայմանագրով իրեն վերապահված իրավասությունը:

Վերոգրյալից հետևում է, որ թեև Վեդի համայնքի ղեկավարի՝ 2023 թվականի օգոստոսի 4-ի «Ազատ Վալոդի Գրիգորյանին տրամադրված վարձակալության իրավունքը ենթավարձակալության հանձնելու թույլտվության մասին» թիվ 1602-Ա որոշման հիման վրա ծագած իրավահարաբերություններին մասնակցում է հանրային իշխանության սուբյեկտ հանդիսացող տեղական ինքնակառավարման մարմինը, այդուհանդերձ, այդ հարաբերություններում վերջինս չունի օրենքով սահմանված իշխանական լիազորություններ իրականացնելու պարտականություն, այլ իրացնում է պետության՝ որպես քաղաքացիական շրջանառության մասնակցի՝ քաղաքացիաիրավական բնույթի իրավունքներն ու պարտականությունները:

13. Վերոգրյալից հետևում է, որ Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/1904/05/24 գործն ըստ հայցի՝ «ՍԱՐԳԻՍ ԵՎ ՊԱՊ» ՍՊԸ-ի ընդդեմ Վեդի համայնքի՝ 2023 թվականի օգոստոսի 4-ի՝ «Ազատ Վալոդի Գրիգորյանին տրամադրված վարձակալության իրավունքը ենթավարձակալության հանձնելու թույլտվության մասին» թիվ 1602-Ա որոշումը վերացնելու, և որպես հետևանք՝ Ազատ Վալոդի Գրիգորյանի և Մանվել Ռազմիկի Մարտիրոսյանի միջև 2023 թվականի օգոստոսի 25-ի՝ ենթավարձակալության պայմանագիրը, և դրա հիման վրա Մանվել Ռազմիկի Մարտիրոսյանի անվամբ իրականացված ենթավարձակալության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ենթակա չէ Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր չէ:

Վերը շարադրվածի հաշվառմամբ գտնում ենք, որ «ՍԱՐԳԻՍ ԵՎ ՊԱՊ» ՍՊԸ-ի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/1904/05/24 գործը ենթակա է Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ՎԴ/1904/05/24 գործն ըստ հայցի՝ «ՍԱՐԳԻՍ ԵՎ ՊԱՊ» ՍՊԸ-ի ընդդեմ Վեդի համայնքի՝ 2023 թվականի օգոստոսի 4-ի՝ «Ազատ Վալոդի Գրիգորյանին տրամադրված վարձակալության իրավունքը ենթավարձակալության հանձնելու թույլտվության մասին» թիվ 1602-Ա որոշումը վերացնելու, և որպես հետևանք՝ Ազատ Վալոդի Գրիգորյանի և Մանվել Ռազմիկի Մարտիրոսյանի միջև 2023 թվականի օգոստոսի 25-ի՝ ենթավարձակալության պայմանագիրը, և դրա հիման վրա Մանվել Ռազմիկի Մարտիրոսյանի անվամբ իրականացված ենթավարձակալության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ենթակա է Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ
ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ